

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵ՛ՀԱՓԱՌ ԿԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱՄՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Նիւ Ետք

Բարին Աստուած Իր լոյս հովանիին սակ շէն ու պայծառ կը պանէ դաստիարակ մեր Մայր Եկեղեցին, որ մեսապէս Սուրբ Հոգիի կեանքաւ բնորհները կը բաշխէ Իր աղօթքի Սեղաններէն, մեր հաւասարեալ ժողովուրդին Ի Հայաստան եւ Ի սփիւռս աշխարհի:

Մենք հոգեպէս մխիթարուած ենք եւ հպարտ, որ մեր Սուրբ Եկեղեցին Իր սուսնաբերութիւնը Ի կասար կ'աժէ արժանաւոր սպասաւորներու առաջնորդութեամբ, Ի հոգեւոր շինութիւն մեր հաւասար ժողովուրդի կեանքին:

Սիրելի Սրբազան, Դուք Ձեր կեանքը՝ պատանի հասակէն սկսեալ, Երուսաղէմի Սուրբ Քաղաքի տեսիլով, նուիրած էք Քրիստոսի Եկեղեցիին՝ ջերմ հաւատով, հոգեւոր ու իմացական բազում բնորհներով եւ անյոզմաբեկ աշխատանքով, մնալով միշտ ազնիւ մտքի եւ ջերմ սրտի մարդ, Ս. Աւետարանի հաւատարիմ զինուոր, հոգեւէն դաստիարակ ժողովուրդի ու նաեւ գրական մեակ, հեղինակ բազում երկերու, բանաստեղծական բունջով յօրինուած:

Յոյժ գնահատելի կը գտնենք մանաւանդ վերջին երկու տասնամեակներու Ձեր վասակը, իբրեւ Եռանդաբաս Առաջնորդ Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին, որ առաւել կազմակերպուեցաւ եւ առաւել շնորհալի՝ յիշատակութեան արժանի Ձեր շինարար իրագործումներուն: Մեծապէս կը գնահատենք նաեւ Ձեր հաւատարիմ ու հոգասար ծառայութիւնները Ի պայծառութիւն Ս. Էջմիածնի Մայր Աթոռիս:

Արդ, ջերմապէս գնահատելով յիսուն տարիներու Ձեր եկեղեցանուէր պայծառ գործունէութիւնը, նաեւ բնորհաւորելով Ձեր ծննդեան 70 ամեակը, սիրով կ'ընդհանաջենք Թեմիդ պատուարժան Թեմական Խորհուրդիդ միջնորդութեան, եւ սոյն Հայրապետական Մեր Կոնդակով Ձեզի կը յղենք Հայրապետական Մեր ողջոյնը եւ օրհնութիւնը, սրտեանդ աղօթքով, որ Տէրը Ձեզի բնորհէ բազում արեւոտ տարիներ քաջառողջութեամբ շարունակելու համար Ձեր առաքելութիւնը Ձեզի յատուկ խանդավառ հոգեւոր Եռանդով ու հոգեւնջումով, մեր Մայր Եկեղեցոյն եւ Հայ ժողովուրդին անսակարկօրէն ծառայելու խոր գիտակցութեամբ:

ՎԱԶԳԷՆ Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Տուտ Կոնդակս Ի 2 Նոյեմբերի
1989 Փրկչական ամի,
եւ Ի սուտարիս Հայոց ՌՆԼԸ
Ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Հմբ. 1650